«ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ/ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՍՄԿԲԿ-ԳՀԱՇՁԲ-18/10 »

ք. Կապան 05 մարտ 2018թ

«Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Կարեն Մելքոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Արման Ասմանգուլյան Ա/Ձ-ն, ի դեմս տնօրեն Արման Ասմանգուլյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տպագրական (բժշկական ձևեր) աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **723 204** (յոթ հարյուր քսաներեք հազար երկու հարյուր չորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

Սույն պայմանագրի մասով Վաճառողը Ապրանքի մատակարարումը իրականացնում է 2018թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4"3 Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետը՝ մինչև ֆինանսական միջոցները նախատեսվելը, սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

...ն կետի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ...թացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ...պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ ...սահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 ***Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, սակայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն այս պայմանագրի շրջանակներում գնումը կիրականացվի անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության դեպքում և կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:***

Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջական խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

ժընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը

անալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ	Ա/Ձ Արման Ասմանգուլյան
Հասցե՝ ք. Կապան, Մ. Ստեփանյան13	Հասցե՝ ք.Երևան, Խորենացի 4-րդ նրբ. 69 տուն
Բանկ՝ Յունիբակ, Կապան մ/ճ	Բանկ՝ «Արդշինբանկ»ՓԲԸ Աղասյան մ/ճ
Հ/Հ 24107001312300	Հ/Հ 247600042830000
ՀՎՀՀ 09420382	ՀՎՀՀ 30923517
Տնօրեն՝ Հ. Մելքոնյան	Տնօրեն ՝ Ա.Ասմանգուլյան
_____	_____
/ստորագրություն/	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 05 » մարտ 2018 թ. կնքված
«ՍՄԿԲԿ-ԳՀԱՇՁԲ-18/1 » ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	Ժամկետը**
9	79821200	Առողջության առաջնային պահպանման ծառայությունների մատուցող բժշկի ընտրությունը վավերացնող գրանցման ձև՝ 004ձև /ՀՀ ԱՆ N57-Ն հրաման 13□07□2013թ՝ հավելված 1/	հատ	4.68	7020	1500	ՀՀ,Սյունիքի մարզ, Ք. Կապան, Մելիք Ստեփանյան 13, «Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ, վիճակագրական բաժին	Պայմանագիրը կնքելուց հետո, յուրաքանչյուր անգամ պատվեր ստանալուց 5 աշխատանքային օրվա ընթացքում, ըստ պատվիրատուի կողմից պահանջված նմուշի և քանակի
12	79821200	Մուտքագրող օպերատորի կողմից վարվող ԱԱՊ ծառայությունների մատուցման հաշվառման ձևի գրանցման մատյան / 200 թերթից/	հատ	1188	5940	5		
13	79821200	Բժշկի կողմից վարվող ԱԱՊ ծառայությունների մատուցման հաշվառման ձևի գրանցման մատյան / 200 թերթից/	հատ	1188	3564	3		
14	79821200	Մեծահասակի ամբուլատոր բժշկական քրտի շրջանառության հաշվառման մատյան / 200 թերթից/	հատ	1188	4752	4		
16	79821200	Հաստատված է ՀՀ կառավարության 14,08,2001թ. 759 որոշմամբ դեղատոմսային ձևաթուղթ N3 դեղատոմս /անվճար 50%, 30%զեղչ կրկնակի/կապիրովկայով/	հատ	12.3	246000	20000		
17	79821200	Ձև N 063 կանխարգելիչ պատվաստումների քարտ	հատ	14.16	7080	500		
18	79821200	Համավճարի պայմանագիր ՀՀ Ան 04.02.2011 128-Ա հրաման	հատ	4.68	4680	1000		
20	79821200	Տեղեկատվություն ծննդօգնության պետական հավաստագրի ներդրման կապակցությամբ հղիներին տրամադրելու համար հավելված 4 ՀՀ ԱՆ 30.05.2008թ.	հատ	4.68	2340	500		

		N761-Ա հրամանի						
21	79821200	Անհատական քարտեղների ծննդյանի հավելված 1	հատ	4.68	2340	500		
22	79821200	Անհատական քարտեղների ծննդյանի հավելված 2	հատ	4.68	2340	500		
33	79821200	Շտապօգնության կանչերի թերթիկ ՀՀ ԱՆ 24.07.2013թ N39-Ն հրաման հավելված2	հատ	3.12	18720	6000		
42	79821200	Կլինիկական լաբորատորիաձև N 11/Արյան հետազոտություն/ ՀՀ ԱՆ 21.11.2013թ .N76-Ն հրաման	հատ	2.34	21060	9000		
47	79821200	Իմունաբանական լաբորատորիաձև N 5/ Շճաբանական հետազոտություն/ ՀՀ ԱՆ 21.11.2013թ .N76-Ն հրաման	հատ	2.34	16380	7000		
55	79821200	Հղիների գերձայնային հետազոտության արձանագրություն N1 ձև հավելված N8 ՀՀ ԱՆ 06.05.2014թ . N 16-Ն հրաման	հատ	4.656	11640	2500		
56	79821200	Հղիների գերձայնային հետազոտության արձանագրություն N2 ձև հավելված N9 ՀՀ ԱՆ 06.05.2014թ . N 16-Ն հրաման	հատ	4.656	11640	2500		
57	79821200	Հղիների գերձայնային հետազոտության արձանագրություն N3 ձև հավելված N 10 ՀՀ ԱՆ 06.05.2014թ . N 16-Ն հրաման	հատ	4.656	11640	2500		
59	79821200	Մատյան բուժհաստատությունների բաժանմունքներում /կաբինետներում/դեղերի և ԲՆԱ-Ի քանակական հաշվառման N3,	հատ	1920	76800	40		
60	79821200	Մատյան բուժհաստատությունների բաժանմունքներում հերթապահ բ/քրոջ դեղերի և ԲՆԱ-Ի քանակական հաշվառման N6	հատ	1920	76800	40		
61	79821200	Ստացիոնար գիրք	հատ	1188	11880	10		
62	79821200	Նորածինների հաշվառման մատյան	հատ	1320	2640	2		
63	79821200	Ստացիոնարում վիրահատական միջամտությունների գրանցամատյան ձև 008y	հատ	1188	4752	4		
64	79821200	Պահանջագիրք դեղորայքի	հատ	1800	21600	12		
65	79821200	Հիվանդների ընդունելության և հոսպիտալացումների մերժման մատյան ձև N001y(ընդունարանի գիրք)	հատ	1188	7128	6		
66	79821200	Շտապօգնության կանչերի գրանցման գիրք	հատ	1188	7128	6		
67	79821200	Հղիների հաշվառման մատյան	հատ	1188	4752	4		
68	79821200	Նարկոտիկ և հոգեմետ դեղերի գրանցման մատյան	հատ	1320	2640	2		
69	79821200	Հղիների արհեստական	հատ	1800	1800	1		

		ընդհատման գրանցամատյան						
70	79821200	Հղիների,ծննդաբերների և ծննդկանների ստացիոնար գրանցամատյան 002Y	հատ	1320	2640	2		
71	79821200	Բժշկական հաստատության կողմից հղիներին տրամադրվող ծննօգնության պետական հավաստագրերի գրանցամատյան հավելված N7 ՀՀ ԱՆ 30,05.08թ. N761-Ա հրամանի	հատ	1800	1800	1		
74	79821200	Ինֆեկցիոն հիվանդությունների գրանցամատյան ձև N060y	հատ	1320	2640	2		
75	79821200	Հավելված N4 Հ.ՀԱՆ 10,10,12թ. N2300-Ա հրամանի ձև 18տ. բարձրանձանց տնային այցերի գրանցամատյան /200 թերթից/	հատ	1188	7128	6		
76	79821200	Հավելված N3 03.07.2013 N35-Ü ÑñÙ³Ý Ñ³í»É´³Í հրամանի ձև 0-18տ. երեխաների սպասարկող ԱԱՊ բժշկի տնային այցերի գրանցամատյան /200 թերթից/	հատ	1188	7128	6		
77	79821200	ԲԿՀ-ի եզրակացությունների գրանցման համար	հատ	1800	1800	1		
81	79821200	Ալկոհոլային խմածության որոշման գիրք	հատ	1800	1800	1		
86	79821200	Գրանցամատյան գոլորշային մեթոդով մանրեազերծման ձև N1 ՀՀ ԱՆ 15.10.2015թ. N 48-Ն հրաման 200 թերթից	հատ	1200	3600	3		
87	79821200	Գրանցամատյան չոր օդային մեթոդով մանրեազերծման ձև N2 ՀՀ ԱՆ 15.10.2015թ. N 48-Ն հրաման 200 թերթից	հատ	1188	5940	5		
88	79821200	Գրանցամատյան քիմիական մեթոդով մանրեազերծման մանրեազերծման ձև N3 ՀՀ ԱՆ 15.10.2015թ. N 48-Ն հրաման 200 թերթից	հատ	1188	4752	4		
89	79821200	Գրանցամատյան ախտահանման նախամանրեազերծման ,մշակման որակի հսկողության ձև N4 ՀՀ ԱՆ 15.10.2015թ. N 48-Ն հրաման 200 թերթից	հատ	1188	5940	5		
90	79821200	Գրանցամատյան մաքրման ,ախտահանման ռեժիմի գրանցման ձև N 5 ՀՀ ԱՆ 15.10.2015թ. N 48-Ն հրաման, 200 թերթից	հատ	1188	11880	10		
91	79821200	Գիրք դեղատներում և/կամ ավագ բուժքույրերի կողմից դեղերի ԲՆԱ-ի անվանաքանակական հաշվառման Ձև N 1 20.01.2007թ.	հատ	1188	11880	10		

		N121-Ա հրամանի 200թերթից						
92	79821200	Գիրք բուժհաստատությունների դեղատներում դեղամիջոցների և ԲՆԱ-ի քանակական հաշվառման ՁՆ N1 200թերթից	հատ	1188	11880	10		
94	79821200	Հղիի հսկողության պարտադիր ծավալների հաշվառման ձև 005Հ Հ ԱՆ 04.02.2015 03 հրամանի 18 հավելված	հատ	4.68	11700	2500		
96	79821200	Գիրք մատյան կաբինետներում դեղերի և ԲՆԱ-ի անվանաքանակական հաշվառման ձև N 5 Հ Հ ԱՆ 26.01.2007 N 21-Ա հրաման	հատ	1188	35640	30		

***Գնման ենթակա ապրանքների քանակները համարվում են առավելագույն մատակարարվող քանակներ՝ որոնք ըստ կարիքի կարող են նվազել:**

****Աշխատանքները իրականացնելուց պատվիրատուի հետ ճշտել բժշկական ձևաթղթերի նմուշների տեսակը և քանակը՝ ըստ գործող չափորոշիչների:**

*** Ապրանքի մատակարարումը իրականացնում է Մատակարարը ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Մ.Ստեփանյան 13՝վիճակագրական բաժին, հասցեով:**

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ
Հասցե՝ ք. Կապան, Մ. Ստեփանյան13
Բանկ՝ Յունիբակ, Կապան մ/ճ
Հ/Հ 24107001312300
ՀՎՀՀ 09420382
Տնօրեն՝ Կ. Մելքոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Ա/Ձ Արման Ասմանգուլյան
Հասցե՝ ք. Երևան, Խորենացի 4-րդ նրբ. 69 տուն
Բանկ՝ «Արդշինբանկ»ՓԲԸ Աղասյան մ/ճ
Հ/Հ 247600042830000
ՀՎՀՀ 30923517
Տնօրեն՝ Ա. Ասմանգուլյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
N 9; 12; 13; 14; 16; 17; 18; 20; 21; 22; 33; 42; 47; 55; 56; 57; 59; 60; 61; 62; 63; 64; 65; 66; 67; 68; 69; 70; 71; 74; 75; 76; 77; 81; 86; 87; 88; 89; 90; 91; 92; 94 և 96	79821200	Բժշկական ձևեր			10%	20%	30%	40%	50%	60%	70%	80%	90%	100%	100 %

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ
Հասցե՝ ք. Կապան, Մ. Ստեփանյան13
Բանկ՝ Յունիբանկ, Կապան մ/ճ
Հ/Հ 24107001312300
ՀՎՀՀ 09420382
Տնօրեն՝ Կ. Մելքոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Արման Ասմանգուլյան
Հասցե՝ ք. Երևան, Խորենացի 4-րդ նրբ. 69 տուն
Բանկ՝ «Արդշինբանկ»ՓԲԸ Աղասյան մ/ճ
Հ/Հ 247600042830000
ՀՎՀՀ 30923517
Տնօրեն՝ Ա. Ասմանգուլյան

(ստորագրություն)
Կ.Տ